

Հայկազուն Ս. Ալվրցյան  
Բանաս. գիյր. թեկնածու

## ԵԿԵՂԵՑԻՆ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅՈՒ ՀՈԳԵՒՈՐ ՏԱՂԵՐՈՒՄ\*

**Բանալի բառեր** – Գանձարան, եկեղեցի, աստղ, լուսին, հարս, փեսա, Հիսուս Քրիստոս, քահանայապետ, խորհուրդ, նշանակ, հարսանիք, ոսկի, արծաթ:

Հիսուս Քրիստոսի եկեղեցին Սուրբ գրքում և հոգևոր գրականության մեջ հաճախ ներկայացվել է այլաբանորեն՝ նշանական խոսքով, և, բնականաբար, եկեղեցի հասկացության համար գործածվել են բառեր, որոնք հետագայում վերածվել են եկեղեցու նշանակների, խորհրդանշանների:

Շատ չծավալվելու համար հիշատակենք աստվածաբանական գրականության մեջ և հայ հոգևոր տաղերում առավել տարածված **հարս** և **լուսին** նշանակները: Դեռևս «Երգ երգոց»-ում հարսն ընտրվել է եկեղեցու, իսկ փեսան՝ Հիսուս Քրիստոսի նշանակ:

Գր. Նարեկացին, «Երգ երգոցի» մեկնության սկզբում դրսևորելով նշանական աստվածաբանության փայլուն իմացություն, նախ բացատրում է, թե Սողոմոնն ինչու է ընտրել հարսի ու փեսայի օրինակը, քանզի «Երգի» սխալ ընկալման գայթակղությունն սկսվում է այդտեղից: Քրիստոսի և սուրբ եկեղեցու խորհուրդներին հասու լինելու համար հարկավոր է ունենալ «հրեշտակային ու լուսավոր սիրտ», բայց քանի որ «...գայնպիսի պատիկորուսաք, և գայնպիսի աչս կուրացուցաք, օն առեալ յերկրորդն դիմեսցուք, և ի ձեռն մարմնաւորացս տեսցուք զհոգևորսն, որպէս և պատմէ Սողոմոն՝ ընկալեալ զշնորհս հոգւոյն սրբոյ: Նա և սուրբ ամուսնութիւն և սէր փեսայի ընդ հարսին ընդ փեսայի, որ ազատ լինի ի պիղծ խառնից, չէ օտար ի հոգւոյն շնորհաց, որով և խորհուրդն ի Քրիստոս և յեկեղեցի աւարտի, ըստ առաքելոյն, թէ «Խորհուրդս այս մեծ է. բայց ես ասեմ ի Քրիստոս և յեկեղեցի»։ վկայելով Սողոմոնի բանիցն»<sup>1</sup>:

Վկայակոչելով փեսայի և հարսի սուրբգրային նշանակները (սյուրբական մարմնավորումները) «ըստ առաքելոյն»՝ Գր. Նարեկացին նկատի ունի Պողոս առաքյալի այն խոսքը, թե «Վասն այսորիկ թողցէ այր զհայր և զմայր

Ը (ԺԳ) փարի. թիվ 1 (53) հունվար-մարտ, 2016  
ՎԿԱ համահայկական հանդես

\*Հոդվածն ընդունվել է տպագրության 7.03.2016:  
1 Գ. Նարեկացի, Մատենագրությունք, Վենետիկ, 1840, էջ 275:

իւր, և երթիցէ զհետ կնոջ իւրոյ, և եղիցին երկոքին ի մարմին մի: Խորհուրդս այս մեծ է, բայց ես ասեմ ի Քրիստոս և յեկեղեցի» (**Եփես. Ե, 31,32**): Իսկ Քրիստոսի խոսքը աշակերտներին՝ փեսայի խորհուրդի վերաբերյալ, որևէ կասկած չի թողնում. «Ասէ ցնոսա Յիսուս, միթէ մարթ ինչ իցէ մանկանց ամագաստի սուգ առնուլ, մինչ փեսայն ընդ նոսա իցէ. այլ եկեացեն ատրք, յորժամ բարձցի ի նոցանէ փեսայն, և ապա պահեսցեն» (Մատթ. Թ, 15): Հարսի խորհուրդը ևս կասկածի տեղիք չի տալիս. «Հարսն եկեղեցի և ժողովուրդ կոչի»<sup>2</sup>:

Աստվածաբանական գրականության մեջ բազմաթիվ վկայություններ կան նաև այն մասին, որ լուսինը ևս խորհրդանշում է Քրիստոսի եկեղեցին. «Սուրբ գրքում երկրի վրա Աստծո եկեղեցին վեհորեն համեմատվում է լուսնի հետ, ինչպես նաև իր շողքն ու փայլը փոխ է առնում ճշմարտության արևից՝ Քրիստոսից»<sup>3</sup>: Այս հաստատումից հետո նույն աղբյուրը մեջ է բերում «Երգ երգոցի» հետևյալ տողերը. «Ով է սա որ երևեալս է իբրև զառաւոտ, գեղեցիկ իբրև զլուսին, ընտիր իբրև զարեգակն, զարմանալի յօրինեալ» (**Զ, 9**):

Ուշագրավ է, որ Գր. Նարեկացին այս տողերի առիթով հազար տարի անաջ նույն միտքն է արտահայտել. «Եւ արդարև հիացումն է ի հողեղէն բնութենէ այնպիսի լինել իբրև զառաւօտ և իբրև զլուսին և իբրև զարեգակն կարգեալ ի հղացումն հրեշտակաց: Այսմ և տէրն վկայէ ասելովն. «Յայնժամ արդարքն ծագեսցեն իբրև զարեգակն արքայութեան երկնից»<sup>4</sup>:

Մահմանափակվենք՝ վկայակոչելով ևս մեկ հաստատում, որ լուսինը խորհրդանշում է Քրիստոսի եկեղեցին. «Գեղեցիկ և պերճ իշխան գիշերոյ, (**Ծն., Ա. 10**), Մին ի գլխաւոր վկայից ամ ազգ մարդկան զբարութենէ, զիմաստութենէ Արարչին, (**Սաղ., Ը, 3**) և որովհետև լուսինն իւր բոլոր լույսը կառնէ յարեգակնէ, և կցովացնէ զայն շուրջանակի, գեղեցիկ պատկեր է եկեղեցւոյ Քրիստոսի»<sup>5</sup>:

Գր. Նարեկացու «Ծննդեան» տաղում նույնպես հանդիպում ենք նույնաբովանդակ պատկերի. ամբողջ փայլով ձենող լուսնի հետքով են շարժվում Արուսյակն ու վառ աստղերը.

**Լուսինն ի լոյս ի լրումն եկեալ,  
ձոխ ձեմելով գիշերավարն  
Ըզկնի ձեմէր բարկ աստեղաւք<sup>6</sup>:**

Ներսես Շնորհալու մի շարք տաղերում լուսինը հանդես ունի աստղերի հետ՝ արտահայտելով այն խորհուրդը, որի մասին խոսվեց.

**Յընծայ լուսին ստուերին  
Փայլմամբ լուսոյ անըստուերին:  
Յընծան պարք աստեղաց**

2 Անդ, էջ 281:

3 Библиейская энциклопедия, М., 1891, с. 439.

4 Գ. Նարեկացի, Մատենագրութիւնք, Վենետիկ, 1840, էջ 338:

5 Բառարան Սուրբ գրոց, Կոստանդնուպոլիս, 1881, էջ 241:

6 Մատենագիրք հայոց, ԺԳ հատոր, Գանձարան, գիրք Ա, աշխատասիրութեամբ՝ Վարդան Գևորգի-Կեանի, Այթիլիաս-Լիբանան, 2008, էջ 109:

## Ընդ յարութիւն յարինողին<sup>7</sup>:

Գանձարանի մի փոխում լուսինը համարվում է ամենապայծառ աստղ Արուսյակի մայրն ու ծնողը, որը այլաբանության այլ մեկնության որևէ հնարավորություն չի թողնում:

## Ո՛վ բոլոր լուսին, մայր և ծընող արուսեկին<sup>8</sup>:

Աստղերը խորհրդանշում են Տիրոջ փառքը երկնքում, նրա գործերի փառավորությունը. «Օրհնեցեք գտեր հերկնից, օրհնեցեք զնա ի բարձանց: Օրհնեցեք զնա արեգակն և լուսին, օրհնեցեք զնա ամենայն աստեղք և լոյս» (Սաղմ., ձԽԸ, 1, 3): Այս սաղմոսը և Աստվածաշնչում աստղերի բազմաթիվ այլ հիշատակություններ նկատի ունենալով՝ «Библийская энциклопедия»-ն գրում է. «Տեսանելի աշխարհում ոչինչ այնքան պերճախոս կերպով չի խոսում Արարչի փառքի և ամենագորության մասին, ինչպես աստղագարդ երկինքը»<sup>9</sup>: «Սուրբ գրոց բառարան»-ում կարդում ենք. «Սաղմոսներգուն Աստծոյ Ջորութիւնը և Ամենիմաստ գիտութիւնը բարձրացնելու համար կրտէ». «Աստղերուն թիւը կը համբրէ, անոնց ամէնն ալ իրենց անուններովը կը կանչէ»<sup>10</sup> (Սաղմ., ձԽԷ, 4): Պողոս առաքյալը հստակ տալիս է լուսատուների փառքի զանազանությունն ու տարբերությունը. «Այլ փառք արեգական և այլ փառք լուսնի, և այլ փառք աստեղաց. և աստղ քան զաստղ առաւել է փառօք» (Ա Կորնթ., ԺԵ, 41), սակայն «Իմաստունք ծագեցցին իբրև զլուսաւորութիւն ի հաստատութեան, և բազումք յարդարոց իբրև զաստեղս հավիտեանս՝ և ևս» (Դան., ԺԲ, 3):

Գանձարանում բազում են եկեղեցուն նվիրված տաղերը, փոխերն ու մեղեդիները, դրանք հիմնականում գովերգում և փառաբանում են եկեղեցին, սակայն կան նաև մի քանիսը, որոնք այլաբանորեն պատկերում են եկեղեցին:

Գանձարան ժողովածուի ՃԺԶ կանոններից երկուսը նվիրված են եկեղեցուն, որոնցից մեկում (ԿԳ. Կանոն եկեղեցույ) ընդգրկված է 17 միավոր (2 գանձ, 15 տաղ և տաղային միավոր՝ փոխ, մեղեդի, հորդորակ): Մյուսում (ՀԸ. Քարոզ եկեղեցույ) ընդգրկված է 7 միավոր (1 քարոզ-գանձ, 6 տաղ և տաղային միավոր՝ փոխ, մեղեդի, հորդորակ): Եթե չհաշվենք 3 գանձերը (սրանց բովանդակությունն ու նպատակն այլ է), մնացյալ 21 տաղերից ու տաղային միավորներից երկուսն առանձնանում են որպես եկեղեցու այլաբանական պատկերի անզուգական կերտվածքներ: Սրանք որպես նշանական խոսքի կատարյալ նմուշներ, կառուցված են այնքան «անթափանց» ու խորհրդավոր, որ անգամ շատ հնուտ մասնագետներ դրանց արտաքին-տեսանելի շերտից անդին թափանցելու փորձ իսկ չեն կատարել՝ բավարարվելով արտաքին-առակային պատումի բացատրությամբ: Դրանք երկուսն էլ պատկանում են Նարեկացու գրչին. առաջինը փոխ է՝ «Հաւու՛ն, հաւու՛ն արթնացեալ» սկսվածքով. զետեղված է ԿԳ կանոնի մեջ (ԿԳ. Կանոն եկեղեցույ), երկրորդը տաղ է՝ «Երգ զարմանալի, երգ շարժվարժենի»

7 Անդ, էջ 764:

8 Անդ, էջ 169:

9 Библийская энциклопедия, М., 1891, с. 272.

10 Բառարան Սուրբ գրոց, Կոստանդնուպոլիս, 1881, էջ 55:

սկսվածքով (ՀԸ. Քարոզ եկեղեցու):

Նախ փորձենք տեսնել եկեղեցու նկարագիրը փոխի այլաբանության մեջ: Հիսուս Քրիստոսի եկեղեցու հաստատումը երկրի վրա մահվան հալածումն է և նոր կյանքի սկիզբը: Այս մեծ ցնծությունը հաճախ համեմատվում է հարսանյաց հանդեսի հետ, որի մասնակիցները նոր մարդիկ են, նոր ժողովուրդներ: Ավետաբեր աքաղաղը, որն այս դեպքում խորհրդանշում է Հիսուս Քրիստոսին, ձայնելով տատրակին, նոր ժողովուրդներին հրավիրում է հարսանյաց հանդեսի, որի խորհուրդը եկեղեցու հաստատումն է:

**Հաու՛ն, հաու՛ն արթնացեալ, դիտելով զհեթանոսս,  
Ձայնէ՛ր, ձայնէ՛ր, տատրակին, սիրասնունդ սիրելոյն.  
-Գարձի՛ր, դարձի՛ր սոմնացիդ ընդ վիմին հովանեալ,  
Եկ, հարսնուհիդ ի լերանց ընծուց, ի դաշտաց այծեմանց:  
Եկեա՛լ, եկեա՛լ տաւաղին յեփրայիմ Բեթելին,  
Ելեա՛լ, ելեա՛լ յասպարէզս ի յայգին Կեդրոնի.  
Հնձան, հնձան կոխելով գոյն ի գոյն բոսորի,  
Արկեա՛լ, արկեա՛լ փայտ ի հաց ըզգենելիս իւր զենեալ.  
Խառնեա՛լ, խառնեա՛լ ի գինի զխառնելիս անուշից,  
Բաժանկ, բաժանկ մատուցաւ ի հրաւէր հարսանեաց.  
Հրաւէ՛ր, հրաւէ՛ր հարսանեաց. Եկայք նոր ժողովուրդք,  
Կերայք, կերայք յիմ հացէս և արբէք զիմ գինիս,  
Ջի կեցիջիք յանրսպառ յանվախճան յաւիտեան<sup>11</sup>:**

Այս ոչ ծավալուն փոխը խորհրդական խոսքի բացատրիկ դրսևորումներից է, որը մի քանի տողում ամփոփում է Հիսուս Քրիստոսի գալուստը, Ավետարանի քարոզչությունն ու եկեղեցու հաստատումը, այսինքն՝ հեթանոսությունից (հոգևոր իմաստով՝ մեռյալ վիճակից) հարություն առած նոր ժողովուրդ, որ Քրիստոսի եկեղեցին է: Ձեռագրերում հանդիպում է «Եկեղեցույ», Փոխ. Եկեղեցույ], «Մեղեդի անոյշ ի Գրիգոր Նարեկեցոյն» [Եկեղեցույ]<sup>12</sup> խորագրերով:

Վեմը, որի հովանու տակ վերադառնալու կոչ է արվում սոմնացուն, Հիսուս Քրիստոսն է. «Վեմ զՔրիստոս կոչէ, զի առաքեալ ասէ, թէ «Վեմն էր ինքն Քրիստոս»<sup>13</sup>:

Հարսանիքին մասնակցելու համար գալիս են **ինձերի** լեռներից ու **այծ-յամների** դաշտերից: Նարեկացին լեռների խորհուրդը մեկնում է հետևյալ կերպ. «Լերինք և բլուրք՝ բռնութիւնք սատանայի կոչին, զոր առ ոտն կոխեաց գալստեամբն իւրով, ըստ ասելոյ մարգարէին, թէ «Լերինք և բլուրք խռովեցան, սասանեցան և դողումն կալաւ զնոսա»: Նա և գնոյն իշխանութիւն առաքելոցն ետ տէրն ի վերայ լերանց, ոչ միայն խայտալ ի վերա լեռնացեալ մեղացն, այլ և ի ծով առաքելոյ»<sup>14</sup>: Սատանայի բռնությունից ազատագրվածներն ու վեմի հովանուն ապավինածները մաքրվել են ու գեղեցկացել այն

11 Սատենագիրք հայոց, ԺԴ հատոր, Գանձարան, գիրք Բ, աշխատասիրութեամբ՝ Վարդան Գևորգեանի, Անթիլիաս-Լիբանան, 2008 թ., էջ 945:

12 Անդ:

13 Գ. Նարեկացի, Սատենագրութիւնք, Վենետիկ, 1840, էջ 294

14 Անդ, էջ 292:

պես – պես մեղքերից, որոնց խորհրդանիշն է ինձերի լեռը. «...նա, որ գազա-նաբնակ էր ընդ առիծս և ընդ ինձս, որ զորացեալ և բռնացեալ էին, և որպէս զառնձ խայտաբղետ կռապաշտութեամբ»<sup>15</sup>:

Այծյամների դաշտերի խորհուրդը տրամաբանական շարունակությունն է ինձերի լեռների խորհուրդի. լեռնացյալ և խայտաբղետ մեղքերից մաքրվելը բավարար չէ «նոր ժողովուրդ» դառնալու համար. հարկավոր է նաև լինել սրահայաց (հոգևոր իմաստով) ու մեղքը հավատի վեճով վանող, ինչը խորհրդանշում է սրահայաց և «օձի սատակիչ» (օձը խորհրդանշում է Աստծո հակառակորդին՝ սատանային) այծյամը. «Այլ սակայն զի յանասունս քան զայծեամն չիք տեսանող, վասն այնորիկ Քրիստոսի տեսողութեան օրինակ է զնա: Եւ զի եղն՝ օձի սատակիչ է, որպէս և Տէրն՝ աներևոյթ օձին: Ըստ եր-րայեցւոց լեզուին Բեթէլ երկինք կոչի, որ և հանէ զփրկեալսն յօձէն»<sup>16</sup>:

Աստվածաշնչյան գրեթե բոլոր անունները (տեղանուններ թե անձնա-նուններ) ինքնին խորհուրդներ և գաղափարներ են խորհրդանշում: Հոգևոր տաղերում այդ անուններն օգտագործվում են համապատասխան խոր-հուրդներն արտահայտելու նպատակով: «Բեթէլ երկինք կոչի» բացատրու-թյան իմաստը պարզ է, այսինքն՝ «...տունն Աստծոյ, անուն քաղաքի յարև-մտից Գայիոյ, Եփրեմայ և Բենիամինի սահմանագլուխը»<sup>17</sup>:

Հարսանիքի մասնակիցները գալիս-կուտակվում (տավաղում) են Աստ-ծո տան նշանակ Բեթելում և դուրս գալիս Կեդրոնի այգու ասպարեզ: Կեդ-րոնն այն ձորն է, որի մեջ Իսրայելի արքան շաղ տվեց իր ձեռքով այրած կուռքի մոխիրը. «Եւ զանտառն ի տանէ Տեառն արտաքոյ Երուսաղեմի ի հեղեղատն Կեդրոնի, և այրեաց զայն ի հեղեղատին Կեդրոնի, և մանրեաց իբրև զփռոշի, և ցանեաց զմոխիրն նորա ի գերեզմանս որդւոց ժողովրդեանն» **(Դ Թագ., ԻԶ, 6)**:

Կեդրոնի (թարգմանվում է **պղտոր**<sup>18</sup>) բուն հոգևոր խորհուրդը նաև զու-գորդվում է կարևորագույն իրադարձությունների հետ: Տերը աշակերտների հետ վերջին գիշերն անցկացնելու համար եկավ Կեդրոնի ափին գտնվող այգին. «Ջայս իբրև ասաց Յիսուս, ել աշակերտօքն հանդերձ յայնկոյս ձո-րոյն Կեդրովնի, ուր էր պարտէզ, յոր եմուտ ինքն և աշակերտքն իւր» **(Յվհ. ԺԸ, 1)**: Այս այգում էլ կատարվեցին նախախնամությամբ սահմանված կա-րևորագույն դեպքերը՝ մատնությունն ու ձերբակալությունը:

Տիրոջ երկրային գործունեությունը ձգվեց Գալիլիայի հարսանիքից մինչև Կեդրոն ձորի ու Ձիթենյաց լեռան միջև գտնվող Գեթսեմանի այգին: Այս երկրային սահմաններում քարոզվեց բարի լուրը՝ Ավետարանը, որի մեջ էլ ամփոփված է Աստծո թագավորությունը: Դա սահմանված էր ի վերուստ, որի նախին մարգարեանում է Երեմիա մարգարեն. «Եւ ամէնայն ձորն Փա-քադիմայ և մոխրոցն, և ամէնայն Սարեմովթն, մինչև ի ձորն Կեդրոնի, մին-չև ցանկին դրան Ասպաստանացն արևելից, սրբութիւն Տեառն. և մի՛ ևս խլեացին, և մի՛ ևս քակեցին մինչև յալիտեան» **(Երե., 31, 40)**: Այսինքն՝ երկնքից (Բեթէլից) երկիր (մինչև Կեդրոնի սահմանը) պետք է հաստատվի

15 Անդ., էջ 305-306:

16 Անդ., 292:

17 Բառարան Սուրբ գրոց, Կոստանդնուպոլիս, 1881, էջ 92:

18 Տեն Համաբարբառ Աստուածաշունչ մատենանի, Պեյրութ, 1963, էջ 1188:

Աստծո թագավորությունը և հավիտյան կանգուն պիտի մնա:

Հին Կտակարանում Կեդրոնի՝ հոգևոր իմաստով ընտրության սահման լինելու խորհուրդն արտահայտված է հետևյալ առարկայական-աշխարհիկ պատմությամբ. Սողոմոնը հոր՝ Դավիթ թագավորի թշնամիներից մեկին՝ Սեմեիին, բնականաբար՝ նաև իր թշնամուն զգուշացնում է չխախտել հոր հրամանը՝ չանցնել Կեդրոնը, այսինքն՝ չհեռանալ Երուսաղեմից (խաղաղության քաղաքից). «Եւ եղիցի յաւուր ելանելոյ քո թէ անցանիցես ընդ հեղեղատն Կեդրոնի, գիտելով գիտասցիր զի մահու մեռանիցիս, և արին քո ի գլուխ քո եղիցի» (**Գ. Թգ., Բ, 37**): Սեմեիին անտեսում է թագավորի զգուշացումը և մահ գտնում: Հոգևոր իմաստով նույնն է կատարվում երկնային թագավորի՝ անթույլատրելի սահմանը չխախտելու զգուշացումն անտեսողների հետ: **Սեմեի** հին եբրայերենից թարգմանվում է **հռչակավոր**<sup>19</sup>: Պատմությունն ունի այլաբանորեն արտահայտված հոգևոր խորհուրդ. ոչ մի երկրային հռչակավոր ավելին չէ, քան թագավորը, առավել ևս՝ երկնային, քանզի Դավիթն ու Սողոմոնը խորհրդանշում են Հիսուս Քրիստոսին: Այս խորհուրդն է արտահայտված Գր.Նարեկացու փոխում. Աստծո տանը հավաքվողների ասպարեզը Կեդրոնի սահման Գեթսեմանի այգին է:

«Կարգ եկեղեցւոյ» տաղում («Երկինք ի յերկիրս և երկիրս ի յերկինքս» սկսվածքով) Կեդրոնի այգին ներկայացվում է իմաստային նոր նրբերանգով. Հիսուսի նշանակ ամպն է հովանի Տիրոջ՝ Կեդրոնի այգուն, որը և նույն բուրաստանն է.

**Ամբակ շափիղայ Տեան յայգին Կեդրոնի,  
Ի խաղըս գետոց հրով վառեալ բուրաստան<sup>20</sup>:**

Այգին խորհրդանշում է հավատացեալներին. «Այգի զհաւատացելս անուանեաց, որք ծաղկեցան այլ և այլ պէսպէս գունովք և պտղովք և հոտովք, ոմն մարտիրոսութեամբ, ոմն զանազան առաքինութեամբք, ոմն բարեգործութեամբք»<sup>21</sup>: Նույն իմաստն ունեն նաև պարտեզն ու բուրաստանը. «Պարտեզ զհաւատացեալս ասէ, որ հարսնացան Քրիստոսի: ...Քրիստոս ասէ յաւետարանի «Ես եմ որթ, և դուք ուռ»: ... Որ պարտեզ է, նոյն և բուրաստան կոչի»<sup>22</sup>: Ուրեմն՝ միայն հարսանիքի մասնակիցներն են խորհրդանշում այգին՝ նոր ժողովուրդը, որոնց Տերը մատուցում է նոր ուխտի նշանակները՝ հացը և գինին՝ որպես անմահության խորհուրդ: Տիրոջ մարմնի նշանակ հացը Ավետարանն է՝ Բանն Աստծո, որ մարմին առավ և ապրեց մարդկանց մեջ. «Ի սկզբանէ էր Բանն, և Բանն էր առ Աստուած, և Աստուած էր Բանն» (**Յվհ., 1,1**), գինին՝ Ավետարանի առակային-խորհրդական խոսքի բուն իմաստը, որոնք ճաշակողները կապրեն հավիտյան.

**Կերայք, կերայք յիմ հացէս և արբէք զիմ գինիս,  
Ջի կեցիջիք յանրսպառ յանվախճան յաիտեան:**

19 Տե՛ս Բառարան Սուրբ գրոց, Կոստանդնուպոլիս, 1881, էջ 493: Համաբարբառ Աստուածաշունչ մատենի, Պեյրուք, 1963, էջ 1255: Библиейская энциклопедия, М., 1891, с. 635:

20 Սատենագիրք հայոց, ԺԴ հատոր, Գանձարան, գիրք Բ, աշխատասիրութեամբ՝ **Վարդան Դևրիկեանի**, Այթիլիաս-Լիբանան, 2008, էջ 944:

21 **Գ. Նարեկացի**, Սատենագրութիւնք, Վենետիկ, 1840, էջ 293:

22 Անդ, էջ 330:

Այս խորհրդական հարսանիքին բազմիցս անդրադարձել են նաև Ներսես Շնորհալիյն ու Գանձարանի մյուս հեղինակները.

**Ուրախութիւն երկրայնոց,**

**Հարսն ի յերկրէ երկնայնոց<sup>23</sup>:**

**Հարսն ի հեթանոսաց ընտրեալ ի եազգաց, ո՛վ սուրբ եկեղեցի...<sup>24</sup>:**

**Հարսնարան յաւերժ հարսանեաց անմահ փեսային, ո՛վ սուրբ եկեղեցի<sup>25</sup>:**

Հարսանիքին մասնակից նոր ժողովուրդը Կ. Երզնկացու նշված տաղում այն ծաղիկներն են, որոնք շրջապատում են Քրիստոսին.

**Է հարսանիք տիեզերաց,  
Է ցընծութիւն պըտղաբերաց,  
Գոյնըզգոյնովք ցեղք ի ցեղաց  
Ծաղկունք զերկիր են զարդարել:**

Հնձանի խորհուրդը, որպես գինու պահպանման տեղի (իմնա՝ Հիսուսի. «Ես եմ որթ, և դուք ուռ») (**Յիվ., ԺԵ, 5**), հետաքրքիր արտահայտություն է գտել Նարեկացու «Համբարձման» տաղում.

**Ջերկրային գունոյ պատմութանին զտարակոյս,  
Դարձեալ լուծանել հարցեալ.  
–Ջի՛ կարմիր հանդերձ քո՛ ըստ լի կոխեալ հնձան:**

**–Հնձան ի խաչին հարեալ,– աւէ,–  
Կոխեցի զթշնամին կենաց,  
Յերկիր ըզմեղաց հեղեալ ըզմաղձն նորա<sup>26</sup>:**

Բազմաթիվ հրատարակություններում, այդ թվում նաև մեր օգտագործած Գանձարանում և Ա. Քեռշկերյանի աշխատասիրությամբ լույս տեսած հատորում «զերկնային» բառն է գործածված, որը, մեր համոզմամբ, սխալ է: Ա. Քեռշկերյանը նաև հղում է կատարում այն ձեռագրերին, որոնցում «զերկրային» ձիշտ բառն է գործածված<sup>27</sup>: «**Ջերկրային**» բառն է գործածել իր թարգմանության մեջ նաև Արշավիր Մխիթարյանը<sup>28</sup>:

Իսկ թե ինչու պետք է լինի «**զերկրային**» բառը, նախ՝ բացատրվում է խորհրդանշանի իմաստով և առկայությամբ, որի կայացման նախապայմանը անտեսանելի խորհուրդը տեսանելիով (սյուրբականով, առարկայականով)

23 Մատենագիրք հայոց, ԺԴ հատոր, Գանձարան, գիրք Ա, , աշխատասիրությամբ՝ Վարդան Դևրիկեանի, Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 755:

24 Մատենագիրք հայոց, ԺԴ հատոր, Գանձարան, գիրք Բ, աշխատասիրությամբ՝ Վ. Դևրիկեանի, Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 1113:

25 Անդ, էջ 1114:

26 Անդ, էջ 884:

27 Տե՛ս Գրիգոր Նարեկացի, Տաղեր և գանձեր, Աշխատասիրությամբ Արմինե Քյոշկերյանի, Եր., 1981, էջ 104:

28 Տե՛ս Գրիգոր Նարեկացի, Տաղեր, Տեքստի թարգմանությունը և հատուկ անունների բառարանը՝ Արշավիր Մխիթարյանի, Եր., 1991, էջ 98–111:

հաղորդելն է. և ապա՝ պարզ տրամաբանությունը. Տիրոջ պատմուճանի **երկնային** գույնը անմարմինների համար տարակուսանքի պատճառ չէր կարող լինել: Այդ է պատճառը, որ Տիրոջը տեսնելով **երկրային** գույնի պատմուճանով («Մարդկային մարմնով ի գոյն արեան») անմարմինները (երկնայինները) նրան չեն ճանաչում:

**Մարդկային մարմնով ի գոյն արեան՝  
ԸզՏէր անմարմնական տեսեալ զուարթոց,  
Ընկեր առ ընկեր հարցեալ, թէ՛ Ո՛վ իցէ:**

Նրանց տարակուսանքը փարատելու համար Տերը բացատրություն է տալիս.

**–Հնձան ի խաչին հարեալ,– աւէ,–  
Կոխեցի զթշնամին կենաց,  
Յերկիր ըզմեղաց հեղեալ ըզմաղձն նորա:**

Այսինքն՝ գինու գույնը նույնացվում է արյան գույնի հետ: Այս խորհուրդն ընկալելի է դառնում Ստեփանոս Սյունեցու հետևյալ մեկնության շնորհիվ, որն, անշուշտ, հայտնի էր Գր. Նարեկացուն. «Իսկ կարմիրն գինեգոյն՝ վասն Մելքիսեդեկի բերելով զխորհուրդս ի դէմս Քրիստոսի»<sup>29</sup>:

Հնձանի խորհուրդն ընդարձակվում է բառի երբայերեն թարգմանության (Գեթսեմանի) համատեքստում<sup>30</sup>: Կեդրոնի (Գեթսեմանի) այգին, ուր հավաքվել էին Հիսուսն ու աշակերտները, ըստ էության հնձանն է (իմա՝ Հիսուսի արյան նշանակ գինու պահպանման տեղը, այս համատեքստում՝ նաև գինի), նույն խորհուրդով հանդիպում է նաև Ներսես Շնորհալու տաղերում.

**Քարունակ բերող ուրախարար պըտղոյն,  
Հընձան ողկուզի ճըշմարտութեան որթոյն**<sup>31</sup>:

Գր. Նարեկացու «Եկեղեցոյ» տաղը («Երգ զարմանալի, երգ շարժվար-ժենի» սկսվածքով) կատարյալ այլաբանությամբ, գեղարվեստական և բանաստեղծական խոսքի կառուցվածքային-ձևական հատկանիշներով ու որակներով հիշեցնում է «Վարդավառի» տաղը: Պատահական չէ, որ «Վարդավառի» տաղից հետո այն շատերի կողմից համարվել է բանաստեղծի ամենաաշխարհիկ բովանդակությամբ տաղը: Գանձարանում զետեղված է «ՀԸ. Քարոզ եկեղեցոյ» կանոնում, ուր քարոզն սկսվում է «Ուրախ լեր, հարսնացեալդ Աստուծոյ, կաթուղիկէ մայր Սուրբ Եկեղեցի»<sup>32</sup>: Ըստ կառուցվածքի բաժանվում է երկու միավորի՝ տաղի և փոխի. տաղը բաղկացած է առաջին ութ տողերից, որին հաջորդում է փոխը՝ «Աչքն ծով ի ծով»<sup>33</sup> բառերով

29 Մեկնությունը խորանաց, Հետազոտություն և բնագրեր, աշխատասիրութեամբ՝ Վ. Հ. Ղազարեանի, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2004, էջ 257:

30 Տե՛ս Համաբարբառ Աստուածաշունչ մատենի, Պեյրուք, 1963, էջ 1142:

31 Մատենագիրք հայոց, ԺԴ հատոր, Գանձարան, գիրք Բ, աշխատասիրութեամբ՝ Վարդան Գևորգյանի, Աթոյի խաւ-Լիբանան, 2008, էջ 1238:

32 Անդ, էջ 1107:

33 Գր. Նարեկացու տաղերից հինգը գրված են այս սկզբունքով:



սկսվող տողով:

**Երգ զարմանալի, երգ շարժվարժենի,  
Տեղի եղեր բարեկերտին:  
Խորհուրդ, խորհուրդ համերամ,  
Ջարդ երամից, զարդ:  
Նոճ ի նոճ յեռ ի սափոր եղեգնատնկոյն,  
Մատն արինարէն նշդարենի ռահ:**

**Յունից նրբենից կից ի մի կից կամար,  
Նէճեն, թէ նէճեն միջարէի ժամ:**

Աչքն ծով ի ծով ծիծաղախիտ ծաւալանայր յառաւաւտուն՝  
Երկու փայլակնաձև արեգական նման.  
Շողն ի շմաթէն իջեալ յառաւաւտէ լոյս:  
Յայտէն նռնենի սարդիատունկ գեղաշիտակ ծայրից ծաղկանց,  
Որոյ սիւնն ի սրտին նուսխայարէն կարկաջահոս սաթբերունի սէր:  
Ձեռաց եղիշոյ կամարաձև կապէր.  
Ատիճանդ-պատիճանդ ստղի-հտղի հուռն.  
Հոսէր գելնեալսն ընդ միմեանս,  
Հանդարտիկ խաղայր, թէկնէթիկին ձեմ:  
Բերանն երկթերթ, վարդն ի շրթանցն կաթէր.  
Լեզուին շարժողին քաղցրերգանայր տաւիղն:  
Ի ծամին խեղեփին հագրէ,  
Ձ'ի նոյն հեր հոգիազգեստեալ գեղն ի գինւոյն գոյն:  
Վարսիցն երամից զարդ, երամից զարդ  
Ոլորս են առեալ եռահիւսակն բոլորեալ զայտիւքն:  
Ծոցն լուսափայլ, կարմիր վարդով լցեալ,  
Ծղիքն ծիրանի՝ մանուշակի հոյլք.  
Խնկեալ ի կնդրկէ բուրուառ՝ հրով ասուածայնով լցեալ,  
Ձայն քաղցրանուագ, որ ի նմանէ հնչէր:  
Գեղեցիկ պատմութեանս զարդարեալ էր,  
Ի կապուտոյ, ի ծիրանոյ, ի բեհեգոյ, ի յորդանէ ոսկեշողէր գոյնն:  
Գաւտին՝ արծաթափայլ, ոսկետտուն, կամարակապ,  
Յականց շափիւղայ մանրամասին յարինուածաւք կապտեալ:  
Անձինն ի շարժել մարգարտափայլ գեղովն,  
Ոտիցն ի քայլել՝ լոյսն ի կաթիլ առնոյր:  
Այն թագաւորին, այն նորածին փրկչին,  
Ձրեզ պսակողին՝ փ'առք յախտեանս, ամէն<sup>34</sup>:

Տաղն ամբողջությամբ եկեղեցու գովքն ու փառաբանությունն է, իսկ եկեղեցին խորհրդանշող հարսը տվյալ դեպքում Ասվածածինն է, որը եղավ բարեկերտի (Հիսուս Քրիստոսի) ամփոփարանը.

34 Մատենագիրք հայոց, ԺԳ հատոր, Գանձարան, գիրք Բ, Աշխատասիրութեամբ՝ Վարդան Գևորգի-Կենանի, Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 1111:

## **Երգ զարմանալի, երգ շարժվարժենի, Տեղի եղեր բարեկերտին:**

Այս հրաշալի երգը, որ ընդհանրական զարդ է, մարդկանց ուղղված խորհուրդ ունի («Խորհուրդ, խորհուրդ համերամ»), այսինքն՝ այն խորհրդական է: Եկեղեցու համեմատությունը հավասարաշար նոժիններից և եղնիններից բաղկացած ծառուղու՝ ճանապարհի հետ կարելի է բացատրել Նարեկացու իսկ մեկնությամբ. «Անփուտ և անուշահոտ են փայտքն այն, և պատշաճ առ ի շինուած. որպէս և մարմին Տեառն մերոյ պատշաճի շինել գտունս զայս, և կամ զմեզ ինքեանս մաքրել ի բնակել. որոյ տունս մեք իսկ ենք ըստ Պաղոսի»<sup>35</sup>: Նոժուց (նաև՝ նոժազգի մայրուց ու եղննուց) ստանում են ամուր, անփուտ, անփուշ և անուշահոտ փայտ, որից էլ Սողոմոն արքան օգտագործեց տաճարի կառուցման մեջ:

Խորհրդական խոսքի այլաբանության համատեքստում ամեն ինչ հասկանալի է. աչքերի ծավալումը ծովի (մարդկային հասարակության) վրա մարգարեությունների (բարի լուրի՝ Տիրոջ գալստյան) իրականացումն է: Ըստ Որոգիների և Նյուսացու՝ «**Աչքերը** մարգարէները և առաքեալներն են, որոնց զարդարել է Սուրբ Հոգին՝ Աստուծոյ խորքերի քննութեամբ, ովքեր աղօթքով, գեղեցիկ դիտմամբ և արտասուքներով տեսան մարդկանց փրկութիւնը՝ Հարս -Եկեղեցու և Փեսայ-Քրիստոսի հարսանեկան խրախճանքը»<sup>36</sup>:

«Երգ երգոցում» փեսան հարսին ասում է. «Դարձո զաչս քո յինէն, վասն զի սրարբեցուցին զիս» (**Զ, 4**): Փեսայի խոռվքի պատճառը, որի համար հարսից պահանջում է աչքերն իրենից դարձնել, Նարեկացու մեկնությամբ այն է, որ հարսը տեսնում է ոչ միայն մարդկանցից, այլև հրեշտակներից ծածկվածը, այսինքն՝ տիրոջ տնօրինական անհաս գեղեցկությունը. «Դարձո զաչս քո յինէն ի խուզել զիմ զանհաս բնութեանս զգեղեցկութիւն, զի մի հառաւել տեսանելն և եամել ի քննելն՝ շլացին և կուրացին մտաց աչքդ. որպէս Պաղոսին մարմնոյ աչքն ի հայելն ի սաստիկ լոյսն»<sup>37</sup>: Գր. Նարեկացին նույնպես աչքերը համարում է մարգարեների նշանակ. «Ակն՝ զմարգարէսն է իմանալ, որ կանխատեսք եղեն այսմ շնորհաց, որպէս և սոյն ինքն Սողոմոն, և որ ըստ նմայն»<sup>38</sup>:

Լույս առավոտից իջած շողի խորհուրդն ակնհայտ է: Ուշագրավ է եկեղեցու արտաքին հատկանիշների նկարագիրը, որոնք խորհրդանշում են ներքին էությունը.

### **Յայտէն նոնենի սարդիատունկ գեղաշիտակ ծայրից ծաղկանց, Որոյ սինն ի սրտին նուսխայարէն կարկաջահոս սաթբերունի սէր:**

Խորանների գրեթե բոլոր մեկնիչներն անդրադարձել են նոնենու (կան նռան, որ որպես խորհրդանշան նույնն են) խորհուրդի մեկնությամբ: Նարե-

35 Գ. Նարեկացի, Մատենագրությունք, Վենետիկ, 1840, էջ 288:

36 Երգ երգոց, հանդերձ մեկնությամբ նախնեաց, «Գանձասար» հանդես, Եր., 1993, էջ 103:

37 Գ. Նարեկացի, Մատենագրությունք, Վենետիկ, 1840, էջ 332:

38 Անդ, էջ 304:

կացուց շատ առաջ Ստեփանոս Սյունեցին գրում է. «... նոնենիքն երեք ստեղունք ի միում փնջի ելեալ, արինակ բերելով զՀնովն առ Նորս, խորանան և Կտակարանան, դառն կեղևովն զքաղցրութիւն պտղոյն ի ներքս ամանելով»<sup>39</sup>:

Իսկ Ն. Շնորհալին իններորդ խորանի մասին գրում է. «Իսկ իններորդ խորանն զտաճարն նշանակէ... Էն և աստ ծառք **նոնենիք**, որք զբանս մարգարէիցն նշանակեն, որք որպէս կեղևաւք ծածկէին առակաւք զքաղցրութեան աւետիսն հեթանոսաց՝ ջամբելով հրէիցն զդառնութիւն սպառնալեացն, որ էհաս նոցա փշատեսակ խոշորութիւն վշտաց և գերութեանց և եկեղեցւոյ հեթանոսաց շտեմարանեցաւ իմանալի պտղոյն բարութիւն»<sup>40</sup>:

Տաղի այս պատկերը գալիս է «Երգ երգոցից» («Իբրև զկեղև նոան այտքք»), որը Գր. Նարեկացին մեկնում է հետևյալ կերպ. «Երկու բնութիւնք են նոան. զի երևելիքն դաժանք են, և աներևոյթն ավտորժականք և բազում առողջութեան առիթք: Արդ հարսն Քրիստոսի, այսինքն եկեղեցի՝ ի վերոյ սքողեալ է գերեսս առաքինական վարութ և խոշորած գնացք և տաժանելիք, այսք արտաքոյ՝ նոան կերպի: Իսկ որք ի ներքս ի նա ամբարեալ է, յոյսն է և սէրն և հաւատն որ առ Աստուած. որով յուտով այնմ ամենայնի համբերէ. զի որպէս նոան ի ներքս համբերեալքն կարի յոյժ ցանկալի է ի կերակուր, նոյնպէս և վարք առաքինութեանց քրտնալիք է և մեծ աշխատութեամբ առջեցալ»<sup>41</sup>: Գր. Նարեկացին այս մեկնության մեջ երկմտելու տեղիք չի տալիս՝ ուղղակի նշելով, որ Քրիստոսի հարսը՝ եկեղեցին, երեսը սքողել է առաքինական վարքով, իսկ քայլվածքը խիստ է ու տաժանելի, այսինքն՝ նոան նման արտաքուստ խիստ ու անհրապույր է՝ ներսում ամբարելով քաղցրությունը՝ հույսը, հավատն ու սերը: Այդ վարքը մշտական է և անկորնչելի, ինչը խորհրդանշվում է պատկերի զարգացման մեջ. նոնենի այտերը նման են գեղաշիտակ սարդի (իմամ մայրի) ծաղիկներին (վերևում նշվեց մայրու անփուտ և անուշահոտ լինելու խորհուրդների մասին): Նաև գեղուղեշ է, որով ցույց է տալիս եկեղեցու ուղիղ (անշեղ) ընթացքը, որով դեպի ծաղկի սիրտն է հասնում կենսատու սերը՝ այն վեմը, որի վրա խարսխվել է Տիրոջ եկեղեցին:

Ներդաշնակ և ավտորժալի երգը (գովքը) ուղեկիցն է եկեղեցու վեհաձեն (թիկնեթիկին) ընթացքի: Այդ երգը նույն քաղցրանվագ տավիղն է («Լեզուին շարժողին քաղցրերգանայր տալիղն»), որ հայտնի է «Վարդավառի» տաղից, այսինքն՝ Դաւթի սաղմոսները («Տերնն տալիղ տուողին, Զօր երգէր Դաւիթ հրաշալին»), որոնք Աստծո՝ Հիսուս Քրիստոսի (վարդի) փառաբանությունն են՝ «Վարդն ի շրթանցն կաթէր»<sup>42</sup>:

Հագրեով (վարդի տեսակ) զարդարված ծամերի ներկը (հոգիազգեստյալ դեղն) գինեգույն է (այստեղ հոգիազգեստյալ բառով իմաստն ավելի է սաստկանում):

39 Մեկնությունք խորանաց, Հետազոտություն և բնագրեր, աշխատասիրութեամբ Վ. Հ. Ղազարեանի, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2004, էջ 260-261:

40 Անդ, էջ 287:

41 Գ. Նարեկացի, Մատենագրությունք, Վենետիկ, 1840, էջ 303:

42 Այս մասին մանրամասն տես Հ. Ավրոյան, Վարդի և տխակի խորհրդանշանները հայ միջնադարյան տաղերգության մեջ, «Բանբեր Երևանի համալսարանի», Եր., 1999, N 1 (97): Հ. Ավրոյան, Հոգևոր տաղի խորհրդարանությունը, «Բազմավէպ», հատոր 2013 (3-4):

Աստծուց ստացած ուժի ու փառքի խորհրդանշան մազերը (ծամերը) եռահյուսք բոլորել են դեմքը. Աստծո փառքն է եկեղեցու դեմքը, խորհրդանշական իմաստով՝ բուն էությունը, որը ինքը՝ Հիսուս Քրիստոսն է. «Ծոցն լուսափայլ, կարմիր վարդով լցեալ»: Եկեղեցու «ծոցը»՝ ավազանը, լուսափայլ է, քանզի այնտեղ բնակվում է Հիսուս Քրիստոսը՝ կարմիր վարդը:

### **Խնկեալ ի կնդրկէ բուրուառ՝ հրով աստուածայնով լցեալ...**

**Կնդրուկի** (սան՝ **խնկի, կինամոնի, գմուռսի**) խորհուրդը հանրահայտ է. շատերն են անդրադարձել դրան, որը Նարեկացին մեկնում է որպես վարքի անուշահոտություն. «Զմուռս՝ մեռելութիւն նշանակէ, կնդրուկ՝ անուշահոտ վարուց»<sup>43</sup>, իսկ Օձնեցու մեկնությամբ՝ «...բուրումն անուշահոտ խնկոցն Հոգւոյն Սրբոյն յերկնայինս ի հոգիս մեր բուրումն անուշահոտութեան յայտնէ»<sup>44</sup>, այսինքն՝ Սուրբ Հոգու հայտնությունը:

Այս տաղին անդրադարձած հետազոտողներից շատերը, տաղը բառացիորեն ընդունելով սոսկ որպես կնոջ գովք, մարմնական արտաքին բարեմասնությունների առարկայական-նյութական նկարագրից հետո հարկ են համարել տարազի մասին խոսելիս այն համեմատել հայ կնոջ տարազի հետ, անգամ նույնացնել: Օրինակ՝ Մ. Մկրյանը ճիշտ նկատելով, որ «Նարեկացու մոտ երգվող կինը դեռ տիրամայրն է», համոզված է, որ այդ կնոջ գեղեցկությունը «...կոնկրետացված է տեղական կենցաղական կոլորիտով»<sup>45</sup>: Եւ քանի որ հասկանալի պատճառներով հոգևոր խորհրդանշանի մասին խոսք չէր կարող լինել, բնականաբար դրանք պետք է դիտվեին որպես «կենցաղական կոլորիտի» տարրեր, «Նարեկացին այսպիսի կենդանի պատկեր ստեղծել է՝ աչքի առաջ ունենալով հայ կնոջը՝ իր ժողովրդական-կենցաղային պատկերով»<sup>46</sup>:

Թերևս միայն Մ. Աբեղյանն է խուսափել այդ գայթակղությունից՝ համոզված լինելով, որ տաղի բովանդակությունը կրոնական է, և առարկայական աշխարհի տարրերն ընդամենը միջոցներ են բուն՝ հոգևոր բովանդակությանը խոսքի կառուցման համար. «Արտաքին բնութիւնից, սակայն, նա դեռ բանաստեղծական պատկերներ է առնում նմանութիւնների, գեղեցիկ ձևերի համար, կամ այն օգտագործում է այլաբանութեան համար, բացի մի տաղից, որի մէջ բնութիւնն է գովերգում դարձեալ կրօնական նպատակով»<sup>47</sup>:

Իրականությունն այն է, որ Գր. Նարեկացին, Տիրամոր կերպարի արտաքին նկարագրով այլաբանորեն պատկերելով եկեղեցին, չէր կարող շրջանցել քահանայապետության խորհուրդը, առանց որի եկեղեցի գոյություն չունի, իսկ եկեղեցու միակ քահանայապետն ինքը՝ Հիսուս Քրիստոսն է: Եւ պարզվում է, որ ոչ միայն հայ կնոջ «ժողովրդական-կենցաղային», այլև ամենաազնվատոհմիկ կանանց կամ թագուհիների հանդերձանքի նկարագրության պատկերով անգամ անհնար է բացահայտել շքեղազարդ և թանկագին ակնեղենով ընդելուզված պատմուճանի խորհուրդը, քանզի դրանք

43 Գ. Նարեկացի, Մատենագրութիւնք, Վենետիկ, 1840, էջ էջ 298::

44 Յովհաննուս Իմաստասիրի Աձնեցոյ մատենագրութիւնք, Վենետիկ, 1833, էջ 134:

45 Մ. Մկրյան, Գրիգոր Նարեկացի, Եր., 1955, էջ 150:

46 Անդ, էջ 152:

47 Մ. Աբեղեան, Հայոց հին գրականութեան պատմութիւն, գիրք առաջին, սկզբից մինչև ժ դար, Այթիլիաս-Լիբանան, 2004, էջ 557:

իրար հետ բովանդակային առունով որևէ առնչություն չունեն, տարբեր ոլորտների տարբեր իրողություններ են.

**Գեղեցիկ պատմուճանան գարդարեալ էր,  
Ի կապուտոյ, ի ծիրանոյ, ի բեհեզոյ, ի յորդանէ ոսկեշողէր գոյնս:**

Սա ըստ էության քահանայապետի հանդերձն է. Տերը Մովսեսին ասում է, թե իր ընտրյալ քահանայապետ Ահարոնի համար վարպետները հանդերձ պատրաստելիս ինչ գույներ պետք է գործածեն. «Եւ առցեն նոքա ոսկի և կապուտակ և ծիրանի և կարմիր մանեալ և բեհեզ» (**Եւ., ԻԸ, 5**): Պատմուճանը պետք է գարդարված լինի ակնեղենով. «Եւ ընդելուզցես ի նմա ընդելուզածս, ըստ չորեքկարգեան ականց» (**Եւ., ԻԸ, 17**), ապա մանրամասնորեն նկարագրում է նաև ակնեղենի տեսակները և դրանց ընդելուզման ձևն ու կարգը:

Ի դեպ՝ նոան՝ որպես Տիրոջ եկեղեցու նշանակներից մեկի ակունքը նույնպես այս հանդերձն է. «Ջանգակ ոսկի և նոնաձև՝ ծաղկեալ առ ստորով վտաւակացն շուրջանակի» (**Եւ., ԻԸ, 34**), այսինքն՝ պատմուճանի քղանցքի վրա լինի նուռ և շուրջանակի ոսկե զանգակ:

**Գույները:** Հովհաննես Օձնեցին սպառիչ մեկնում է պատմուճանի և չորս գույների խորհուրդը. «Քանզի զպճղնաւորն զգենլով Ահարովնի՝ զմարմնանալ բանին նշանակէր՝ զչորեքնիթէայ բնութիւնս գարդարեալ շքեղաշուք արդարութեամբ: Կապուտական զերկնաւորն եցոյց առաքինութիւն և կարմրովն մանուածոյ՝ զանապական արեանն կցորդութիւն, որով հաւասարեաց մեզ արեան և մարմնոյ: Եւ բեհեզովն սպիտակաւ զԱստուածութեանն ընդ բնութիւնս մեր խառնումն, և ծիրանեան՝ զծածկեալ խորհուրդ անձառելի տնօրէնութեան»<sup>48</sup>: Ահարոնին պատմուճանով օժտելը խորհրդանշում է Տիրոջ գալուստը («զմարմնանալ բանին»), կապույտը՝ երկնավոր առաքինությունը, կարմիրը՝ անապական արյունը, սպիտակը (բեհեզը)՝ մեր էության մեջ Աստվածության խառնումը, ծիրանին՝ անձառելի տնօրինության ծածկյալ խորհուրդը:

Եկեղեցին, որ կրողն է այս խորհուրդների, գոտեպնդված է տիրոջ խոսքով.

**Գաւտին՝ արծաթափայլ, ոսկետտուն, կամարակապ,  
Յականց շափիւղայ մանրամասին յաւրինուածաւր կապտեալ:**

**Ոսկին, արծաթը, մարգարիտը:** «Արծաթափայլ, ոսկետտուն» գոտու խորհուրդն ընկալելի է դառնում արծաթի և ոսկու նշանական իմաստների բացահայտմամբ: Սուրբ Գրքում այս ազնիվ մետաղները բազմիցս հիշվում են որպես Աստծո խոսքը կամ պատվիրանը. «Առ, գնեա յինէն ոսկի փորձեալ ի հրոյ զի մեծասցիս և հանդերձս սպիտակս՝ զի զգեցցիս, զի մի՛ երևեսցիս անվայելչութիւն մերկութեան քո, և դիր դեղ յաչս քո զի տեսցես» (**Յայտ., Գ, 18**): Տերը իր պատվիրաններից շեղված Լավոդիկեի եկեղեցուն խորհուրդ է տալիս իրենից գնել փորձված ոսկի, որ և՛ մեծանա, և՛ հարստանա, և՛ վայելուչ երևա. այստեղ այլաբանության խորհուրդն ակնհայտ է՝ հետևել Տիրոջ խոսքին: Այլ դեպքում մաքուր (յոթ անգամ զտված) արծաթն է խորհրդանշում Տիրոջ խոսքը. «Բանք Տեառն են բանք սուրբ, որպէս զարծաթ ընտրեալ

48 Յովհաննու Իմաստասիրի Աւանեսոյ մատենագրութիւնք, Վենետիկ, 1833, էջ 160-161:

և փորձեալ յերկրէ, սրբեալ և պարզեալ և թնապատիկ ի հողոյ» (**Սաղ., ԺԲ, 7**): Միայն ոսկու և արծաթի շնորհիվ կարելի է գերծ մնալ հիվանդություններից. «Եհան զնոսա ոսկուով և արծաթով, և ոչ գոյր յագգի նոցա հիւանդ» (**Սաղ., ձԵ, 37**): Այլաբանության խորհուրդն ակնհայտ է. խոսքը Աստծո պատվիրանով ապրողների հոգևոր առողջության մասին է, և այդ ոսկին ու արծաթը այլ տեղ պետք չէ որոնել, քանզի «Իմ է արծաթ և իմ է ոսկի, ասէ Տէր ամէնակալ» (**Անգ., Բ, 8**): Այս խորհուրդները հայ աստվածաբաններին և մեկնիչներին քաջ հայտնի էին: Հ. Քեոսեյանը Օձնեցու և Մայրագոմեցու՝ խորհրդանշանին նվիրված ուսումնասիրության մեջ գրում է. «Եթէ Փիլոնի մեկնութեամբ արծաթը մաքրութեան նշանակ է, ապա Օձնեցու («նուիրանոցքն արծաթիք՝ յստակ և մաքուր բանն է հաւատոյ») և Մայրագոմեցու համար արծաթն իր այլաբանական նշանակութեամբ համարժէք է Տիրոջ խօսքին կամ բանին «հաւատոյ»<sup>49</sup>:

Տաղի վերջին այլաբանական պատկերն ամբողջացնում է եկեղեցու խորհուրդը, որը նրա առաքելությունն է.

**Անձինն ի շարժել մարգարտափայլ գեղովն,  
Ոսիցն ի քայլել՝ լոյսն ի կաթիլ առնոյր:**

Շարժումը, քայլքը մարգարտափայլ գեղեցկությամբ բնորոշելն անսովոր է, չունի առարկայորեն ընկալելի բնութագիր, եթե զանց առնենք այլաբանության իմաստը. եկեղեցու ընթացքը, այսինքն՝ նրա առաքելության իրականացումը (Տիրոջ խոսքի՝ Ավետարանի քարոզչությունը) մարգարտափայլ է (Տիրոջ խոսքի նշանակներից մեկը մարգարիտն է. Քրիստոսը պատվիրում է աշակերտներին. «Մի՛ տայք զսրբութիւն շանց, և մի՛ արկանէք զմարգարիտս ձեր առաջի խոզաց, զի մի՛ առ ոտն կոխիցեն զնոսա, և դարձեալ երգիծոցանիցեն զձեզ» (**Մատթ., Է, 6**): Տիրոջ խոսքի՝ մարգարիտի տարածումն է (եկեղեցու շարժումը, ընթացքը), որ բնորոշվում է մարգարտափայլ գեղեցկությամբ: Այս այլաբանության համատեքստում առանց դժվարության ընկալվում է «Ոսիցն ի քայլել՝ լոյսն ի կաթիլ առնոյր» նախադասության խորհուրդը. հոգևոր լույսը տարածվում է եկեղեցու գործունեությամբ՝ Տիրոջ խոսքի տարածումով:

Այս տաղում գործածուած բոլոր խորհրդանշանները, ինչպես և նախորդները, նույն խորհրդական իմաստներով հետագայում լայնորեն գործածվեցին հոգևոր բանաստեղծության մեջ:

**Հայկազուն Ս. Ավրոյան** – գիտական հետաքրքրություններն ընդգրկում են հայ հին և միջնադարյան գրականության, հատկապես հոգևոր տաղի աստվածաբանության, խորհրդական խոսքի նշանական համակարգի մեկնության, հոգևոր խորհրդանշանի տեսության խնդիրները: Հեղինակ է այս հարցերին առնչվող բազմաթիվ հոդվածների: Զբաղվել է նաև 20-րդ դարի վերջին քառորդի հայ բանաստեղծության բանարվեստի խնդիրներով, հրատարակել մի շարք հոդվածներ:

<sup>49</sup> Քեոսեյան Հ., Դրուագներ միջնադարեան արուեստի աստուածաբանութեան, Ս. Էջմիածին, 1995, էջ 67:

## Summary

### CHURCH IN SPIRITUAL POEMS (TAGH) OF GRIGOR NAREKATSI

Haykazun S. Alvrtsyan

**Keywords** – Treasury, church, star, moon, bride, groom, Jesus Christ, the High Priest, Collegium, icon, wedding, gold, silver.

The allegorical image of the church of Jesus Christ in Armenian spiritual poems is an unprecedented manifestation of symbolic speech, which in fact was out of scientific attention. In the best case, they deployed such biblical stable and common symbols as the Moon and the bride in order to comprehend the church. The reason is that metaphor is not perceived in this kind of works, and therefore, these poems are interpreted as secular works.

This article attempts to review these works as manifestations of spiritual allegory and interpret them as such. The theory bases of such approach are not only the Bible and theological literature but also theoretical works of the poets of the era, such as the famous interpretation of “The Songs of the Songs” by Grigor Narekatsi, which is not only necessary but also irreplaceable in evaluation of spiritual songs.

## Резюме

### ЦЕРКОВЬ В ДУХОВНЫХ СТИХАХ ГРИГОРА НАРЕКАЦИ

Айказун С. Алврцян

**Ключевые слова** – Казначейство, церковь, звезда, луна, невеста, жених, Иисус Христос, Первосвященник, коллегия, значок, свадьба, золото, серебро.

В армянских духовных стихах аллегорический образ церкви Иисуса Христа является беспрецедентным проявлением символической речи, на которое исследователи практически не обратили внимание. В лучшем случае для понятия церкви использовали такие библейские стабильные и общепризнанные символы, как луна или невеста. Причина заключается в том, что в таких произведениях метафора не воспринимается, и, следовательно, эти стихи толкуются как мирские произведения.

Данная статья представляет собой попытку рассмотрения этих произведений как проявлений духовной аллегии и их толкования как таковых. Теоретической основой такого подхода являются не только Библия и богословская литература, но и труды поэтов той эпохи, каким является например известное толкование “Песни песней” Гр. Нарекаци, которое не только необходимо, но и незаменимо в оценке духовных песен.

ՀԱՅԿԱԶՆ ՍԵՎՐՏՅԱՆ

Ը (ԺԳ) Գրքի, թիվ 1 (53) հոկտյար-նոյեմբր, 2016

ՀՀԿ հասնահայրիպան հանրէա